

№ 279 Ս. Էջմիածին 9 Մարտի 1964 թ.

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

*Մայր Աթոռս, ցաւօք սրտի տեղեկացաւ ի մասին անսպասելի ներկայութեան եւ գործունէութեան Ս. Էջմիածնի իրաւասութեան ներքոյ Մարսիլիոյ թեմին մէջ, Կիլիկեան Աթոռի Միաբան Տ. Արտաւազդ Եպիսկոպոսի, որի հետեւանքով Մարսիլիոյ Հայ Եկեղեցական համայնքի ծոցում առաջացած է ներքին խռովութիւն եւ պառակտում. Ստացուած են բողոքագրեր Արեւմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ եւ Ֆրանսիայի առաջնորդ Տ. Սերովբէ Արքեպիսկոպոսից եւ Մարսիլիոյ Հայոց Թեմական եւ Եկեղեցական վարչութեանց կողմից։*

*Մայր Աթոռս այս պարագան համարում է Եկեղեցական կանոնների բացայայտ խախտում եւ բոլորովին ոչ համաձայն Երուսաղէմի 26 նոյեմբեր 1963-ի ողջագուրման ոգուն։ Որով խիստ բաղձալի է եւ անհրաժեշտ որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը անյապաղ պարտն ու պատշաճը տնօրինի, ի պահպանումն Հայ Եկեղեցու կարգաց եւ կանոնաց, նուիրապետական մեր Աթոռների իրաւասութեանց սահմանների եւ Սփիւռքահայ եկեղեցական կեանքի միասնութեան ու խաղաղութեան։*

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

digitised by A.R.A.R.@